ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2015 թ. նոյեմբերի 18 **N 135- Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՓՆԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 415-Ա հրամանով հաստատված՝ 2015 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ափնագյուղ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ Գագիկ, Վալյա, Արման և Հովիկ Կարապետյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0.32 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք հողամասում (ծածկագիր 02-023-0107-0008) փաստացի կառուցված է և գործում է ավտոտեխսպասարկման կետ:

Խախտվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^9 և 54-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Ափնագյուղ գյուղական համայնքի ղեկավար Ռոմիկ Կարապետյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ, որն ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005243119:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Ափնագյուղ համայնքի ղեկավար Ռոմիկ Կարապետյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ափնագյուղ համայնքի ղեկավար Ռոմիկ Կարապետյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 10 օրվա ընթացքում:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ